

**Ի՞ատաղ դըստրիկն յերկիր խոնարհ  
Օ Ամէնն ասէ անդ առ երի :**

**Ի խըստակրօն կուսանաց վանս  
Վ ըտակս առուաց տեսեալ իմ էր,  
Լ ըռին ալեօքըն սահարկեալս  
Խնդ ի պարտէզըն տիրանուէր .**

**Ամեն յըստակ՝ խորհըրդաբար  
Գնային ի պտոյտ ընդ վայրսն անթիծ .  
Չըքնաղ զուարթնոց երկրի անդ պար  
Շեմէր ընդ մարգս օրհնեալս յերկնից :**

**Ի քուակդ անշուք , տալովըդ խոյս , —  
Սուղ վայրկենիւք կեանքս ո՞չ չափին , —  
Տաս միշտ խորհել մենացելոյս՝  
Օ աւուրցն հոսանս , յօդուտ անձին :**

### Տիւսի

**Կազի լնդունարանի մը հրդեհիլը :**

**Ինցեալ տարուան վերջին օրը Բարի-  
զու մէջ սոսկալի դիպուած մը պատա-  
հեր է , որ թշուառաբար մէկ երկու  
հոգւոյ չէ թողուցած այս տարուան  
արել տեսնելու . զոր և հետաքրքրա-  
կան նիւթ մը սեպելով՝ ուզեցինք մենք  
ալ հրատարակել :**

**Տարւոյն վերջընթեր իրիկունը Բա-  
րիզու Գադէ (Cadet) ըստուած թաղին  
մէջ Դազինոյ անուամբ կազի գործա-  
տան տեսուշը , որ Պ. Բերեկալլա կ'ը-  
սուէր , կազի խողովակներուն մէջէն  
սուլելու ձայն մը լսելով՝ իմաց տուաւ  
Պ. Տօտէ հոգաբարձուին . անիկայ ալ  
շուտով կը հրամէ Պասդա անունով  
աշխատաւորին , որ ընկերութենէն մե-  
քենաներուն վրայ հսկող դրուած է ե-  
ղեր , որ երթայ մէկ մը քննէ եղածը և  
դարմանէ . Ա'երթայ ասիկայ և կը զննէ**

**կը տեսնէ որ գործարանին չափացոյց  
գործին մաքրուելու կարօտութիւն ու-  
նի , և իրիկուն ըլլալուն համար երեք-  
շաբթի առաւուժուն կը ձգէ գործը :**

**Երկրորդ օրը մէկէն ձեռք կ'առնու  
իր ընելիքը , և մինչև երեկոյեան ժամը  
հնգին քառորդ մնացած միակերպ կ'աշ-  
խատի . նոյն միջոցին Պ. Տօտէ ալ ը-  
սած գործիքնելոնու դիմացի սենեկին  
մէջ կը գտուի եղեր . մէյ մ'ալ յան-  
կարծ սոսկալի ցնցմամբ մէկ տեղէն կա-  
զը սկսէր է դուրս յարձըկիլ : Ի՞սկ վտան-  
գը տեսնելով ուրիշ աշխատաւոր մը ,  
մէկէն կայծակի պէս կը վազէ ու կ'եր-  
թայ վերի յարկին վրայ հաստատուած  
ընդունարանին ապահովութեան գոնա-  
կը կը բանայ : Բայց իրեն հազիւ թէ  
իջնելու ժամանակ կ'ըլլայ ըլլար՝ այն  
կազին փշումը , որ ինչպէս ըսինք բացած  
ծակերէն սաստիաբար դուրս կ'ելլէր ,  
Պասդայի քովին եղած ճրագին հասնե-  
լով , բոյ կ'առնու , և ահաւոր շառաւ-**

մամբ Ճայթելով՝ բոլոր թաղը կը սարսեցընէ : Այս ցնցմնանքէն վրայի յարկը խախտելով՝ կը փլչի, յատակին վը բայ կ'իյնայ և գործարանին ստորին յարկը բոլորովին կը կործանէ :

Քովի եղած կրպակներն ու տուներն ալ չարաչար կը խասին այս աղէտալի հրդեհէն . և անմիջապէս մերձակայ դինետան մէջի եղած սեղանատախտակը մէդր մը հեռու կը նետուի, որուն դիմացը ոտքի վրայ արհեստաւորին մէ կը գաւաթ մը զինի խմելու ատեն՝ հոն կը խանձի կը մնայ : Խոկ Պասդա այդ վիշտակներուն տակ մնալով զոհ կ'ըլլայ դժբաղդաբար իրեն արուեստին : Երկրորդ օրը կ'երթան կը գտնեն եղկելոյն դիակը, այն գործիքներուն քով ուր կ'աշխատէր առջի օրը, բոլորովին ածուխ գարձած և անկերպարան, 'ի մեծ սուգ թողլով թշուատ կին մը և հինգ զաւակ • որոնց ո՞գիտէ ինչ յուսով առաջուց այս նոր տարին մաղթած էր, կարծելով թէ սե մահը այսչափ անգութ չըլլար : Ա իրաւորելոց մէջ կը գտուի նաև Պ. Տէմարէս Պաղպից դրամատեղւոյն ընկերներէն մէկը, որ գլխուն վրայ ծանր վերք մը կ'առնու, և վիզը՝ ուսելն ու թեւերը այրելով կը վրաւորուին . նոյնակէս թաղին օրագրապէտն ու տասնըլեց տասնըեօթն հոգոյ չափ անցուարներ :

(Ե) Երա թաղին վերատեսուցն այս հըրդեհին ձայնը լսելուն պէս՝ իր գրագիրն հետն առած վրայ կը հասնի, վիրաւորելոց պէտք եղած օգնութիւնն ընելու համար • որոնք շուտով մօտի գեղավաճառի խանութ մը կը տարուին և մեծաւ մասամբ իւրաքանչիւր իրենց տուները . իսկ Տէմարէս՝ լա Ռիպուտասիէր հիւանդանոցը կը փոխադրուի : Ըստ մը կրակին տեղը կը հասնի ստոիկանութեան գլխաւորն ալ և անձամբ կը հըրամայէ հարկաւոր միջոցներն ՚ի գործ դնելու : Պլանը թաղին ջրբերներն ու Տրուոյ, Ռէնէէր և Թէղ-Աղադուառ կայանից հրդեհի ջրհանները մէկէն հոն կը վաղեն, կարծելով թէ խիստ մեծ կրակ բռնկած ըլլայ : Բարիզու պահանորդ

գնդէն ալ խումբ մը զօրք կ'երթայ թաղն ապահովութեանը համար հոն սպասելու . և նոյն Ճամբան ինչուան իրիկուն խափանեալ կը մնայ անցուդարձէն : Գաղինոյի գեղեցիկ սրահէն ուրիշ բան չիմնար, բայց եթէ սեցած, մը ուտած քարերու կոյտեր : Բայց մէկ քանի վտանգաւոր ձեղուններ անհաստատ և առկախեալ մնացած ըլլալով, ջրհաններէն մէկ մասը հոն կը կենայ առ ժամանակ մի՛ նորահաս արկածից դարման տանելու համար : Աակայն Գաղինոյի գործատունը Բագերնէ ընկերութենէ ապահովուած ըլլալով՝ ընկերութեան տեսուցը մէջ մը զննելէն ետեւ եղած խասը, որ երկու հարիւր հաղար ֆրանգէն թերեւս աւելի ալ ելլէ, յայտնեց որ ընկերութիւնն առանց ուշացընելու նորէն կը շնէ գործատունը :

Յաղագու այդուոյ որ նէխեցնէ շղունակն և շղունակն : Եւն որ յառաջ մենակ ՚ի յաղովն . և է որ ՚ի խաղողն, է որ ՚ի խաղողին . և այգոր գեղն այս է : — Առ անմեռկի ջուր և գարեփոխինդ, և խառնէ ընդ յիրար, և օծէ զտունկն . և թէ անմեռկի ջրով ողկոյզն այլ օծես՝ օգտէ : Եւն որ առնուն կրակաց մոխիր և յաղթի տեղ ՚ի տակքն ընուն ՚ի տնկին, օգտէ :

1. Գիրք ՎԱՍՏԱԿՈՑ . ԳԼ. Ճ : Վաստակոց Գիրք, որ մշակական շատ տեսակ օգտակար հրահանգներ կը բովանգակէ . կը կարծուի որ յունարենէ և լատիներենէ թարգմանուած ըլլայ կէս ոսմկական ոճով : Հաւանականաբար ըրտ հինգ հարիւր տարան հնութիւն մը կրնայ տրուիլ սկզբնագրին . ասկէ կը հետևի որ այս խաղողի հիւանդութիւնն առը բռնըրովին նոր բան մը չէ մեր գարուս, և թէ անտենն ալ ձար մը գտնելու կը ջանախին :